

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳԱՀ ՎԱՐԴԻԿԸ

ՅԵՎ ԻՐ ՇԵՒԿԸ

G 39-
A 330



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

891.995

Բ-22

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ.

1931

891.995
Ф-22
БАДЛИСТ
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР
2011-07

ՔԱԶ ՎԱՆԻԿԸ ՅԵՎ ԻՐ ՇՆԻԿԸ

I. ՎԱՆԻԿՆ—ՀՈՎԻՎ

Վանիկը չունի վոչ հայր, վոչ մայր: Միայն
մի քեռի ունի, բայց նա շատ հարուստ գյուղացի
յեւ և Վանիկին չի սիրում: Իսկ Վանիկի իսկի
վեջն ել չի նա ունի, թեպետ շատ վատ, բայց
իր սեփական խրճիթը, ուր նա ապրում է մենակ:
Վոչ, մենակ չեւ, այլ յերկուսով՝ իր շան հետ—
Պարտիզանի հետ: Նրանք վոչինչ չունեն—վոչ ձի,
վոչ կով, վոչ կատու: Վանիկը վորբ եր մնացել
մանկությունից, նա չի յել հիշում, թե յերբ են
մեռել իր հայրն ու մայրը: Սկզբում նա ման եր
գալիս գյուղից գյուղ, վողորմություն խնդրում,
բայց հենց վոր յոթը տարին լրացավ, զգաց իր
մեջ ուժ և վարձվեց խողեր արածացնելու: Յեզ
ահա հինգ տարի յեւ նա խողեր եւ արածացնում:
Իսկ հիմա ուզում եւ կովեր արածացնել, խողերից
բեզարել եւ, և հետո մեծացել եւ, ամոթ ե՞ 12 տա-
րեկան հասակում խողեր արածացնել, հիմա այն-
քան մեծ եւ, վոր կարող եւ կովերին հսկել, պահ-

պանել: Յեվ Վանիկը կարող ե: Միթե այդպիսի
շան հետ, ինպիսին Պարտիզանն ե, չի կարող
հսկել կովերին: Հենց վոր կանչես նըան՝


— Պարտիզան, չթողնես այս կողմից կովերը ցորենի արտը մտնեն, իսկ յես մյուս կողմից կհետեւմ:

Իհարկել Պետք ե համոզված լինել, վոր վոչ
մի կով հոս ել չի քաշի այդ կանաչ ցորենից:

II. ՎԱՆԻԿԸ ԾԱՆՈԹԱՆՈՒՄ Ե ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ZTS

Բայց Վանիկի մտադրությունը — կովեր արածացնել — չիրագործվեց։ Սկսվեց հեղափոխությունը Իշխանությունը վերցրին Խորհուրդները։ Գյուղացիները բաժանվեցին յերկու մասի. վորոնք աղքատ եյին — Խորհուրդների կողմն եյին, իսկ վորոնք հարուստ եյին — դեմ եյին Խորհուրդներին։ Վանիկն ու Պատիզանը, իհարկե, խորհուրդների կողմն եյին, — ամբողջ գյուղում նրանցից չքավոր փնտրեյիր — չեյիր դտնի։

Գյուղացիները սկսեցին ամեն որ ժողովի հավաքվել։ Վանիկն ու Պարտիզանն ել են գնում ժողովին։ Դալիս են կանգնում մի անկյունում ու լսում։ Իսկ գյուղացիները գուգուռում են։ Մեկը գոչում ե.



— Պետք չեն Խորհուրդները! Թող կորչեն! Խորհուրդները միայն տկլորների համար ե:

Իսկ մյուսները պատասխանում են:

— Կեցցե Խորհուրդները! Նրանց որոք մենք միայն մի քիչ շունչ կքաշենք, թե չե դուք մեզ բոլորովին խեղդում եք, այ դուք կուլակներ!

Վանիկն ել ե անկյունից դոչում.

— Ճիշտ ե, ձնշում են մեզ հարուստները!

Իսկ Պարտիզանը բարկացկոտ, փայլուն աչքերով նայում եր կուլակների կողմը և մռուցնում: Չնայած հարուստների աղմուկին, գյուղում Խորհուրդը ընտրեցին, իսկ նրա նախագահ — ընտրեցին ամենաչքավոր գյուղացուն — Սաքո Մանուկյանին: Այս, ինչքան ուրախ եյին Վանիկն ու Պարտիզանը:

— Պարտիզան! Կեցցե Խորհուրդները, — գոչում եր Վանիկը:

— Հավ! Հավ! Հավ! — ուրախ հաջոցով պատասխանում եր Պարտիզանը, պոչը դես ու գեն պտտացնելով:

— Պարտիզան! Կորչեն կուլակները!

— Ո-ո-ո-ո-ո! Ո-ո-ո-ո-ո-ո-ո! — բարկացկոտ մրթմրթում եր Պարտիզանը և նայում եր շուրջը, չկա արդյոք մոտիկ թե կուղակ վոր հախիցը զա ինչպես պետքն ե:

Իսկ մյուս ժողովներում գյուղացիները կովում եյին հողի համար: Զքավորները ասում եյին, վոր

հողը պետք ե հավասար բաժանել, իսկ հարուստները չեյին համաձայնվում:

— Մենք հողը փողով առել ենք վոր ձրի տանք ձեզ! — գոռում եյին հարուստները:

— Իսկ վերաեղից եք այդ փողերը վերցրել: Մեր քրտինքով եք հավաքել, — պատասխանում եյին չքավորները:

Յեվ հողը հավասար բաժանեցին: Մինչեւ անգամ Վանիկին ու Պարտիզանին ել հող տվեցին, ինչքան վոր հասնում եր:

— Պարտիզան, — կանչում եր Վանիկը, — մեզ ել են հող տվել: Հիմա պետք ե մի քիչ մեծանալ և մի ձի առնել: Վար պիտի անենք, Պարտիզան, քեզ հետ միասին:

Այդպես եր մտածում Վանիկը Պարտիզանի հետ միասին, բայց տես թե ինչ դուրս յեկավ... Գյուղում գենիկինցիներ յերևացին: Ամենից առաջ գնդակահարեցին նախագահ Սաքո Մանուկյանին: Զքավորների ձենը փորներն եր ընկել:

Իսկ հարուստները ուրախանում եյին: Նրանք սպիտակներին կերակրում եյին ձվաճեղով ու հայրոյում Խորհուրդները:


Բայց նրանք մի քիչ շտապեցին ուրախանալ: Շուառվ կաքմիլները յեկան ու յետ խոկեցին նրանց: Հարուստները քթները կախ են զցել, իսկ հիմա յել չքավորներն են ուրախանում:

Վանիկն ու Պարտիզանը նորեն սկսեցին ուրախ վազվել:

— Զեյթ ասում քեզ, Պարտիզան, վոր կարմիրները դրանց կխռկին! Հը:

— Հավ!

Մի անգամ յերեք կարմիր-բանակային մտան Վանիկի իրճիթը:



— Ընկեր, կմրելի յե քեզ մոտ պիշերել. — հարցը նրանք:

— Կարելի յե:

Կարմիր-բանակայինները շատ ուրախ տղաներ եյին, իսկույն տեղափորվեցին: Թեյ պատրաստեցին, կոնսերվաեր հանեցին:

— Ընկեր, ինչպես ե քո ազգանունը. — հարցը նրանք Վանիկին:

— Աղասյան, պատասխանեց Վանիկը:

— Դե, նատիր մեզ հետ ընթրիր, ընկեր Աղասյան:

Յեվ Վանիկը նստեց: Կարմիր-բանակայինները խփում եյին Վանիկի ուսին ու ասում.

— Շուտով պիտի մեզ ոգնես, ընկեր:

Առավոտյան կարմիր-բանակայինները շարունակեցին իրենց ճամբան: Իսկ Վանիկը ասում եր Պարտիզանին. —

— Տեսար, Պարտիզան, կարմիր-բանակայիններին: Լսեցիր, ինչպես նրանք ինձ անվանեցին: Բա, հանաք մասխարություն չի: Յես հիմա — «ընկեր» եմ: Լսում ես, Պարտիզան!

— Հավ, հավ, հավ!

III. ՎԱՆԻԿՆ ՈՒ ՊԱՐՏԻԶԱՆԸ ՈԳՆՈՒՄ ԵՆ ԲԱՆԼՈՐՆԵՐԻՆ

Քաղաքից բանվորները յեկել եյին գյուղ հաց տանելու: Գյուղացիները աղմուկ բարձրացրին. «Հաց չենք տա»: Ժողով արեցին:

— Ընկերներ! — ասաց բանվորներից մեկը: — Մենք քաղցած ենք: Մեր յերեխաները սովոր մեռնում են:

— Մեզ հաց չունենք, — գոչում ելին կուլակները:

— Ունեն, ունեն նրանք, բայց թագցնում են! — գոշում ելին չքավորները:

«Յեվ ճիշտ ե, վոր ունեն, — մտածում եր Վանիկը: — Յես ինքս գիտեմ, թե ինչքան նրանք ունեն»:

Յերկար գոռզոռացին, աղաղակեցին բանվորներն ու գյուղացիները և վորոշեցին ստուգել — ով ինչքան հաց ունի:

Գնացին ամենահարուստի մոտ — Վանիկի քեռումոտ: Բացեց նա ամբարը:

— Նայեցեք, յեղբայրներ, — ասում ե քեռին: Իսկ ամբարում հացարկղի մեջ մի քիչ ալյուր ե թողել:

«Մասում ե քեռին, — մտածում ե Վանիկը: — Յերկի թագցրել ե վորեե տեղ»:

Բանվորները ման յեկան, ման յեկան ամբարի շորս կողմը և վճռեցին գնալ — հաց չկա: Վանիկը կուցավ Պարտիզանի ականջին ու փսխաց.

— Պարտիզան... դտիր...


Պարտիզանը մտավ ամբարի տակը, վիճորեց ու սկսեց հաջալ:

— Ախ, գայլերը կրան պատուտեն! — գոռաց քեռին: — Յեղբայրներ, դուքս արեք դրան այդաւեղից, թխսկանին կփախեցնի!

Բանվորներից մեկը նայեց ամբարի տակը:

— Վոչ, ընկերներ, այստեղ թխսկանի հոտ չի գալիս: Շունը յերբ հողը փորում ե, ուրեմն, այնտեղ բան կա թաղած:

— Վոչ, վոչ, յեղբայրներ... այնտեղ վոչինչ չկա! — գոռում եր քեռին:



Բայց նրան չհավատացին: Բարձրացրին հատակի տախտակները, նայեցին...

Իսկ այնտեղ Պարտիզանը փորել, տախտակները շարժել եր: Բարձրացրին այդ տախտակները, — աեմնում են՝ հոր ե, մինչև յեղը ցորենով լցրած:

— Եխ, ոքեսիք! Ամոթ չունես: Մարդիկ սովից
մեռնում են, իսկ դու ցորենը գետնի տակ ես
թագյունում:

Բանվորները ցորենը լցրին պարկերը ու տա-
րան կայաբան: Մյուս գյուղացիները տեսան, վոր
վոչինչ չի դուրս գա, վճռեցին իրենց կամքով
հացը տալ: Յեվ ավեցին:

— Դե, Պարտիզան, — ասաց Վանիկը, — հիմա
զգուշ կաց, յեղբայր, ականջներդ խլշած պահի,
թե չե կուլակները մեզ կուպանեն, վոր մենք հացի
տեղը բանվորներին ասեցինք:

Յեվ ամբողջ մի շաբաթ Վանիկը Պարտիզա-
նին խրճիթից դուրս չեր թողնում: Տանը նստած
խոսում են:

— Նրանք քեզ, Պարտիզան, անկյունից կարող
են սպանել:

— Ռոռռռռռռ:

— Մոռաս, չմռաս, մեկ հ՝ խփելու յեն:
Մենակ տոտամիներով դու վոչինչ չես կարող անել:

— Ռոռռռ! Հավ, հավ, հավ! — և Պարտիզանը
վագեց դեպի դուռը:

— Թող, հիմար! դրանք կարմիր-բանակային-
ներն են — դոչեց Վանիկը, յերբ տեսավ նույն
յերեք կարմիր-բանակայիններին, վորոնք անցյալ
անդամ գիշերել ելին իր մոտ:

IV. ՎԱՆԻԿՆ ՈՒ ՊԱՐՏԻԶԱՆԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

— Բարե, ընկեր Աղատյան:

— Բարե, ընկերներ:

— Իսկ մենք, յեղբայր, նորից յեկել ենք քեզ
մոտ գիշերելու, միայն թե սպիտակները չիմանան:

Վանիկը վախեցավ, Պարտիզանն ել ձենը կըտ-
րեց, լսելով այդպիսի լուր:

Ուրեմն սպիտակները նորից ձեզ խոկնեմ են. —
հարցը Վանիկը:

— Խոկում են, յեղբայր, բայց մենք այդ
թույլ չենք տա, քիչ սպասի:

— Իսկ դուք ավելի լավ կլիներ ընդմիշտ նրանց
խոկեյիք:

— Խա-խա-խա! Շատ ճատիկն ես դու, յեղբայր:
Միթե կարելի յե միանգամից խոկել, յերբ նրանց
ոգնում են արտասահմանից:

— Մեզ ոգնության կգան նոր ընկերներ, այ
այն ժամանակ ուրիշ բան ե:

Կարմիր-բանակայինները ելի թեյ յեփեցին,
կոնսերվիներ հանեցին, Պարտիզանին ել տվեցին
մի ձուկն:

— Բայց չլինի թե, աղերք, հանկարծ վրա
տան, — ասաց կարմիր-բանակայիններից մեկը:

— Վրա չեն տա, — պատասխանեց Վանիկը: —
Պարտիզան, գնա փողոց և լավ հսկիր: Աչքերդ
չորս արա!

Յեկ Վանիկը բաց թողեց Պարտիզանին փողոցի:
— Իսկ ինչու դուք միայն յերեքով եք, — հարցրեց Վանիկը:
— Վորովհետեւ մենք — ռազվեղկա յենք: Ուաղվեղկայում միշտ քիչ մարդ են լինում, վոր նկատելի չլինի:
— Հա-ա-ա! — Հասկացավ Վանիկը: — Յես ել կուղեյի ձեղ հետ ռազվեղկա գնայի, ընկերներ!
— Ե, ինչ կա վոր... գնանք: Դու մեղ կարող ես շատ ոգտակար լինել:
— Միայն թե Պարտիզանին ել հետս կտանեմ:
— Չե, շունը ռազվեղկայում այնքան ել լավ չե. հանկարծ կարող ե հաջալ՝ յերթ պետք չե.
— Պարտիզանը չի հաջալ՝ միայն նրան ասե՞ս «Պարտիզան, լոիր!» և նա կլոփ ինչ ել վոր լինի, — պաշտպանում եր Պարտիզանին Վանիկը:
— Դրա մասին մենք կխոսենք կամանդիրի հետ:
Այդ ժամանակ Պարտիզանը փողոցում սկսեց ուժեղ հաջալ:
Լսվեցին կրակոցներ:
— Իմ Պարտիզանին կուլակները սպանում են! — Ճշում եր Վանիկը:
Կարմիր-բանակայինները վերցրին հրացանները:
— Սպիտակներն են, սատանեն տանի դրանց...
Տղերք, կենդանի ձեռքները չընկնենք!

Իսկ Պարտիզանը կատաղի կովում եր սպիտակների հետ: Նա մթության մեջ հարձակվում եր նրանց վրա, վոտները կծոտում, նրանք կրակում եյին Պարտիզանի վրա, բայց չեր դիպչում:
— Իմ յետեկից յեկեք, ընկերներ, — ասաց Վանիկը, — Պարտիզանը չի թողնի այստեղ գան, իսկ մենք դուրս կգանք յետեկի դոնից:
— Գնանք!
Վանիկն ու կարմիր-բանակայինները դուրս յեկան խրճիթից: Նրանք անցան բակի յետեկը, և տեսան, վոր գյուղը գրավել ե սպիտակների մի մեծ ջոկատը:
— Տղերք, ինչ կլիներ մեր հալը, յեթե նրանց ձեռքն ընկնեյինք: Լավ շուն ունես, ընկեր Ազատյան! Լսում ես, ինչպես նրանց հետ այնտեղ կովում ե:
— Հա-ա-ա! Իսկ դուք չեք ուղում նրան վերցնել: Այդպիսի շուն չեք գտնի:
— Չե, պետք ե վերցնել: Յեթե նա չլիներ, մեր բանը խարաք եր: Կանչի թող գա:
V. ՎԱՆԻԿՆ ՈՒ ՊԱՐՏԻԶԱՆԸ ՌԱԶՎԵԴԿԱՅՈՒՄ
Առավոտյան Վանիկը նկատեց, վոր Պարտիզանը կաղում ե:
— Ընկերներ, դիտեք վոր Պարտիզանը վիրավոր ե,

Յեվ Վանիկը սկսեց լաց լինել:


— Ե՞տ ինչ ե... ե-ե, ել ինչ կարմիր-բանակային ես, վոր լաց ես լինում: Քո հալը ինչ կլինի, յերբ իսկական կովի մեջ լինես, — ասացին կարմիր-բանակայինները:

— Յես... յես... այն ժամանակ լաց չեմ լինի, — պատասխանեց Վանիկը, արտասունքները սրբելով:

Կարմիր-բանակայինները ծիծաղեցին, Նրանցից՝ մեկը շտապ հանեց պայուսակից բինտը և կապեց Պարտիզանի վերքը, Յեվ շարունակեցին ճամբան... Վանիկը հոգնել եր, բայց վոչինչ չի ասում ընկերներին: Վախում ե, թե նորեն կամաչացնեն իրեն.

«Ել ինչ կարմիր-բանակային ես, վոր մի քիչ ճամբան յես յեկել ու արդեն հոգնել ես»:

Չե, պետք ե դիմանալ, պետք ե խկական կարմիր-բանակային լինել: Յեվ Վանիկը դիմանում եր: Նա հազիվ հաղ եր կարողանում ընկերներին հասնել: Խռկ Վանիկի կողքին քարշ եք գալիս յերեք վոտքով, վիրավոր Պարտիզանը: Արդեն հասան նրանք մի գյուղ, ուր Վանիկը յերբեք չեր յեղել: Այստեղ նրանք գտան սազվեղկայի կամանդիրին: Կամանդիրը նստած սեղանի մոտ ընդունում եր տեղեկությունները:



Վանիկը մոտեցավ սեղանին: Նա բոլորովին
 չկախեցավ կամանդիրից, վորովհետև նա վոչնչով
 չեր տարբերվում մյուս կարմիր-բանակայիններից:
 — Դե... ինչպես ե քո անունը, — հարցրեց
 կամանդիրը Վանիկին:
 — Վանիկ Ազատյան, — պատասխանեց նա:
 — Քի՞! Տանը դու վոչ վոք չունես:
 — Չունեմ:
 — Ուրեմն դու մենակ ես:
 — Վոչ, մենակ չեմ, Պարտիզանը հետո ե...
 — Այդ հիվ ե, Պարտիզանը:
 — Դա սրա ընկերն ե, շատ խելոք ու քաջ
 շուն ե, — պատասխանեց կարմիր-բանակայինը:
 — Յես ել եմ քաջ, — չհամբերեց Վանիկը:
 — Լավ! Ուրեմն, դու ուզում ես ուզվեղիա
 գնալ:
 — Ուզում եմ:
 — Իսկ չես վախենում, վոր սպիտակները քեղ
 խիեն:
 — Զե, յես ել նրանց կիսփեմ:
 — Իսկ յեթե նրանք քեզ բոնեն, ու դու
 նրանց բոլորը պատմես:
 — Մի խոսք ել չեմ ասի: Միթե յես չզիտեմ,
 վոր մերոնց մասին չի կարելի պատմել թշնամուն:
 — Ապրիս!

Կամանդիրը մի թուղթ գրեց և ալեց կարմիր-
 բանակայինին:

— Ընկեր Ազատյան, գնա դրա հետ, քեզ
 զգեստ կտան:

Մի ժամից հետո Վանիկը հագած նոր գիմ-
 նաստյորկա, նոր շալվար, նոր սապոգներ ու
 նոր գլխարկ՝ կոտրատվում եր: Այդպես զուգված՝
 Վանիկը յերբեք չեր յեղել: Նա հպարտանում եր
 իր զգեստով Պարտիզանի առաջ:

Պարտիզանը պոչը դես ու դեն եր պտտեց-
 նում: Նա իհարկե տեսնում եր, վոր Վանիկի
 շորերը վրայովը չեն, և կասես, մեշոք լինի հա-
 գած. բայց չեր կարողանում ասել. մարդկային
 լեզու չզիտեր:

VI. ՎԱՆԻԿԸ ԿՐԱԿԵԼ Ե ՍՈՎՈՐՈՒՄ

Վանիկն ու Պարտիզանն արդեն մի քանի շաբաթ
 ե վոր ջոկատումն են ազլրում: Առաջին հերթին
 Վանիկը սովորեց ինչպես վարվել հրացանի հետ:
 Նա առաջ կարծում եր, դա հեշտ բան ե, բայց
 դուրս յեկավ վոր այնքան ել հասարակ բան չե:
 Նախ և առաջ հրացանը շատ ծանր ե: Կարմիր-
 բանակայիններից մեկը սովորեցնում եր նրան
 բոլոր վարժությունները հրացանի հետ: Վանիկը
 հրացանի ծանրության տակ տնքում եր, քրտնում,
 բայց ցույց չեր տալիս վոր հոգնել ե, Նա զիտեր

վոր իսկական կարմիր-բանակայինը հրացանի հետ
վարդում ե այնպիս հեշտությամբ, ինչպես փե-
տուրի հետ: Այն ընկերը, վորը սովորեցնում եր
վանիկին, մի քանի անգամ հարցնում եր նրան:

— Հոգնել ես, Վանիկ:

— Իսկի յել չեմ հոգնել! Շարունակենք, —
քաջարար ասում եր Վանիկը, իսկ վոաներն ու
ձեռքերը հոգնածությունից դողում են: Այդ ժա-
մանակ կարմիր-բանակայինը ասում եր.

— Դու յեթե չես հոգնել, բայց յես եմ հոգ-
նել: Արի մի քիչ հանգնատանանք:

— Միասին — դա ուրիշ բան ե, կարելի յե և
հանգստանալ:

Յեվ Վանիկը մեծ բավականությամբ նստում
եր խոտին:

Հետո սկսվեցին կրակելու դասերը: Առաջ պետք
եր կրակել մանրագնդակով, կակ Վանիկը ուզում
եր կրակել իսկական փամփուշտներով: Վանիկը
շուտ-շուտ հարցնում եր իր ուսուցչին, թե նա շու-
տով իրեն կտանի իսկական հրացանաձգության:

— Սպասիր, սպասիր, մի անգամից չի կարելի,
յեղբայր:

Վերջապես հասավ այդ որը: Գնացին նրանք
իսկական փամփուշտներով կրակելու: Պառկեց
Վանիկը գետնին: Հրացանը դրեց մի թմբի վրա,

նշան դրեց ու կրակեց: Հրացանը ցնցվեց և
ուժով խփվեց ուսին:

— Վոչինչ, յեղբայր, կրակելու ժամանակ դա
միշտ լինում ե, — քաջալերում եր կարմիր-բա-
նակայինը:

Բայց հետո Վանիկը սովորեց կրակել ինչ-
պես պետք ե:

Վերջացը Վանիկը հրացանից կրակելը, հիմա
սկսեց պուլեմյոտից կրակել սովորեց:

Ամբողջ կուրսը ավարտեց: Իսկ ուզվեղկի—
չեն ուղարկում: Տիրում եր Վանիկը և հետո յել
վիրավորվում, վոր իրեն դեռևս չեն վստահանում:

VII. ՈԱԶՎԵՌՉԻԿ ՎԱՆԻԿԸ ԳԵՐԻ ՅԵ ԸՆԿՆՈՒՄ

— Ընկեր Ազատյան! — ասաց մի անգամ կա-
մանդիրը: Դու պիտի ուզվեղկա գնաս: Պետք ե
չորս գյուղ ըրջես և իմանաս թշնամու ուժերը,
ինչքան են և ինչպիսի ուժեր են՝ հեծելազոր են
թե հետեազոր, ինչքան պուլեմյոտ և թնդանոթ-
ներ ունեն: Բոլորը լավ իմացիր և վաղը յերե-
կոյան վերադարձիր այստեղ: Կկատարե՞ս:

Կկատարեմ, ընկեր կամանդիր! — պատաս-
խանեց Վանիկը:

— Նայիր, յեղբայր, ականջներդ սուր պահի,
յեթե բռնվես, քեզ գերեզման և սպասում:

— Զեմ բոնվի! Տվեք ինձ բաջկոն ու չարուխաներ և մի պարկ։ Յես կհագնվեմ ինչպես մուրացկան և այնպես կշըջեմ, յես զիտեմ մուրացկանություն անել, առաջ դրանով եմ կերակրվել։

— Լավ, միայն շանը չվերցնես հետդ։ Յես նկատել եմ, վոր նա սպիտակներին չի սիրում, նրանց տեսավ թե չե — կհարձակվի և դրանով քեղ կմատնի։

— Լավ, — հառաչեց Վանիկը։

— Դե, գնա!.

Վանիկը հագավ մուրացկանի շորեր, վերցրեց փայտը ու գնաց, միայն գալիֆե շալվարը չհանեց. մեկ ե՛ չի յերեռում բաճկոնի տակը, Վանիկը զբանը դրեց բոլորովին նոր ատրճանակ։ «Մի բան յեղած դեպքում, կենդանի ձեռքներն չեմ ընկնի»։ Իսկ Պարտիզանը սարայում կողպված, վոռնում եր ու աշխատում դուրս գալ։

Վանիկը շրջեց յերեք դյուլ, ամեն ինչ տնտղեց, պարկը լիքը հաց ժողովեց։

«Հիմա, — մտածում եր նա, — գնամ չորրորդ գյուղը և հայդա, — յետ»

Հենց վոր մտավ գյուղը, հենց առաջին խրճիթից սկսեց վողորմություն խնդրել. իսկ միևնույն ժամանակը նայում ե — վորտեղ և ինչքան հեծելազորք կա, ինչքան հետեւազորք։ Յերբ մոտեցավ տեղացի վաճառականի մեծ տանը, Վանիկը

մտածեց. — գնալ թե չգնալ, նա զգում եր, վոր ամենագլխավոր հրամանատարները ասյաեղ պիտի լինեն։

«Թալաքի մեջ կընկնեմ, բայց լավ կլիներ — ներս նայեցի, նրանք, կարելի յե, հիմա վորեւ կարենոր բանի մասին են խոսում, Ե՞ւ ինչ ուզում ե լինի, գնամ!»

Յեկ Վանիկը ներս մտավ։

Մեծ սենյակում նստել ելին դենիկինյան պոլկովիկներ և մի գեներալ։ Նրանք ինչ մի բանից վրդովված եյին։ Վանիկը կանգնել ու լսում ե։ Գեներալը ասում է.

— Յեթե մեզ ոգնության չգան ու կարմիրները հարձակվեն, մեր բանը խարաբ ե։

— Այո, բայց ոգնություն մեզ կգա յերկուրից վոչ շուտ։

— Տղա, ի՞նչ զործ ունես այստեղ! — գոռաց պոլկովիկներից մեկը, յերբ տեսավ Վանիկին։

— Վողորմություն...

— Կորիր այստեղից!

Վանիկը շուռ յեկավ վոր դուրս գա, իսկ մյուս պոլկովիկը կանգնեցնում ե.

— Ապա սպասիր, փոքրիկ!


Վանիկը կանգ առավ։ Պոլկովիկը մոտեցավ նրան, կասկածավոր նայեց վոտից մինչև գլուխ և հանկարծ բռնեց Վանիկի ձեռքից։

— Վայ, ցավում ե! — ճշաց Վանիկը, աշխատելով գուրս պրծնել:

Բայց պոլկովնիկը ել ավելի սեղմեց Վանիկի ձեռքերը:

— Ոգնեցեք ինձ՝ խուզարկել այս շան լակոտին:

Սկսեցին խուզարկել Գտան Վանիկի մոտ ատրճանակ և վկայականը այն մասին, վոր նա մտել ե ծառայության կամավոր:



— Ձես իսկույն նկատեցի, վոր սա սովորական մուրացկան չի: Իսկական մուրացկանը այս ժամանակին, յերբ գնդակներն են վզվում, չի դնա վողորմություն հավաքելու:

— Ասա, վհրտեղ են ձերոնք, և ինչքան են:
— Յես ձեզ վոչինչ չեմ ասի:
— Ախ, այդպես...

Յեվ վոսկեղոց պագոններով պոլկովնիկները սկսեցին ծեծել Վանիկին: Իսկ Վանիկը լուռ եր: Այնքան ծեծեցին Վանիկին, մինչև վոր արյունակալվեց, հետո կանչեցին զինվորներին ու հրամայեցին ձեռքերը կապել ու գցել սարայը:

— Թող մի գիշեր քաղցած պառկի, հետո մի անգամ ել կհարցնենք: Վաղը և յեթ գնդակահարել հարցումից հետո!

VIII. ՊԱՐՏԻԶԱՆԸ ԱԶԱՏՈՒՄ Ե ՎԱՆԻԿԻՆ

Վանիկը ուշի յեկավ դատարկ ու մութ սարայում: Մարմինը սաստիկ ցավում եր: Շոշափեց յերեսը՝ ուռել եր, աչքի մեկը չեր բացվում: Վանիկը հիշեց Պարտիզանին:

«Պարտիզան... սիրելիս... Հիմա դու յել ես նստած սարայում, միայն քո՝ կարմիր-բանակայինների... Լաց ես լինում յերկի ինձ համար: Բաց կթողնեն քեզ սարայից, կտեսնես վոր քո Վանիկը այլևս չկա: Յեվ Վանիկը լաց յեղավ, նա գիտեր վոր իսկական կարմիր-բանակայինը չպիտի լաց լինի, բայց նա շատ եր ուզում տեսնել իր ընկեր Պարտիզանին:»



Հանկարծ Վանիկը լսեց ինչ վոր վսկսոց ու մշշոց
գետնի տակից, Նա վախեցավ: Սկսեց ականջ դնել...
«Յերեկի ինչ վոր կենդանի յեւ են, ինչ անեմ... մեկ
եւ, — ել չեմ ապրելու», — մտածում եր Վանիկը:
Վանիկը նայում եւ, նայում եւ և ինչ տեսնում...
Հողը բարձրանում եւ, շարժվում եւ: Հետո հողի
միջից յերեաց... Պարտիզանի գլուխը:

— Պարտիզան!!! — Ճշաց Վանիկը խելագարի պես:
Պարտիզանը վագեց դեպի Վանիկը:

Վանիկը համբուրում եր Պարտիզանին, լաց եր
լինում ուրախությունից, իսկ Պարտիզանը լի-
զում եր Վանիկին ու պոչը պտտեցնում:

— Պարտիզան... Միք լիս... Ի՞նչպես դու ինձ
գտար: Հետքերմվս: Ո՞վ քեզ բաց թողեց: Ախ դու
քյալլազյոզ! Մենք յերկուսով յերբեք չենք կորչի:
Ի՞նչպես կարողացար դու այդպես անցք բանալ!

Իսկ Պարտիզանը նայում եր Վանիկին ու զար-
մանում, թե ինչու իրեն չի շոյում:


— Հա-ա-ա! Չեմ կարող, Պարտիզան, — գլխի
ընկալ Վանիկը:

— Չեռքերս կապած են: Այ յեթե կարողա-
նայիր այս թոկը կտրաել ատամներովդ, — այն
ժամանակ ուրիշ բան եւ:

Վանիկը պառկեց յերեսի վրա, իսկ Պարտիզանը
նայում եր ու պոչը պտտեցնում, նա դեռ չեր
հասկանում թե ինչ պիտի անի:

— Պարտիզան, կտրիլ այ այստեղ! — ասաց Վա-
նիկը և շարժեց կապահ ձեռքերը:

Պարտիզանը ատամներով առաջ քաշեց թոկը,
հետո սկսեց կրծոտել ու բարկացած մռոռում եր:
— Կտրիր, կտրիր, Պարտիզան!



Դժվարությամբ կտրեց թոկը Պարտիզանը:
Վանիկը շոյեց նրա գլուխը և ասաց.

— Իսկ հիմա — հայդա, Պարտիզան! Մենք պետք
ե շուտով հասնենք մերոնց:

Եեվ Վանիկը Պարտիզանի յետեից շտապ դուրս
յեկալ անցքից, վորը փորել եր Պարտիզանը
պատի տակը:



IX. ՎԱՆԻԿԸ ՎԻՐԱՎՈՐՎՈՒՄ Ե, ԻՍԿ ՊԱՐՏԻԶԱՆԻ
ԹՈՉԸ ԳՆԴԱԿԸ ՊՈԿՈՒՄ Ե

Արդեն լուսացել եր:

Վանիկն ու Պարտիզանը արդեն բավական հեռացել եյին, յերբ նրանց նկատեցին դենիկինցիները,

— Թագվեդչիկը փախել ե!

— Թագվեդչիկը փախել ե!

Դենիկինցիները սկսեցին իրար անցնել:

— Զիավորներ, ձիավորներ, շնւռ!

Բայց թամբած ձիաներ չկային: Սպան հրամայեց պուլեմյոտ բերել: Իսկ այդ ժամանակ Վանիկն ու Պարտիզանը վազում եյին ու վազում:

— Վագենք, Պարտիզան, վագենք! Քիչ ե մնացել մինչև թփերը... Իսկ այնտեղից մերոնք մոտ են:

Տղի-ի-ի-ի-ին... տղի-ի-ի-ի-ի-ին... տղի-ի-ին:

Տա-տա-տա-տա-տա...

— Քայլերդ արագացրու, Պարտիզան, մեզ վըապուլեմյոտներից են կրակում:

— Ա-ա-ավ, այ! — ցավագին ճչաց Պարտիզանը:

Յետ նայեց Վանիկը, իսկ Պարտիզանի փմփուխ պոչը կարծես թե չեր յեղել յերբեք: Գնդակը պոկել եր նրան արմատից...

— Վագիր, Պարտիզան, վագիր! Առանց պոչի յել յոլա կգնաս... Ահա մոտ են թփերը... Հիմա միքիչ շունչ կառնենք:

Յեվ նրանք քայլերը դանդաղեցրին:

Պարտիզանը վնասում եր իր պոչը, վագստում եր ու լիզում իր վերքը:

— Թող, Պարտիզան, տանը կկապեն վերքը:

Նորեն սկսեցին վազել...

Ահա գյուղը, վորտեղ կարմիր-բանակայիններն են: Հենց վոր կարմիր-բանակայինները նրանց տեսան, սկսեցին գոչել:

— Վանիկ! Վորտեղից: Այդ ով ե քեզ այդպես նախշել:

— Հետո կպատմեմ... Ժամանակ չկա... Պետք ե շուտ կամանդիրին հասնեմ... ընկերներ, կապեցեք Պարտիզանի վերքը՝ պոչում վերք ունի ստացած:

— Բայց նա պոչ չունի!

— Դե, միենույն ե... կապեցեք այն տեղը, վորտեղ պոչն ե յեղել... այնտեղ... վորտեղ...

Յեվ Վանիկը վագեց դեպի այն խճիթը, ուր գտնվում եր ուսպիեղիկ կամանդիրի գրասենյակը:

— Ա-ա-ա! Ընկեր Աղատյան! Այդ ով ե քեզ այդպես ծեծել: Նստիր այստեղ: Խոմ չես ընկել սպիտակների ձեռքը:

— Ընկեր եյի, բայց փախա: Պարտիզանը ինձ հետքերովս գտավ և ազատեց:

— Քեզ պետք ե հիվանդանոց ուղարկել: Դու վիրավոր ես:

— Վորտեղս ե վիրավոր:

— Թեղ։ Նայիր...

Նայեց Վանիկը, թեր ամբողջ արյունոտ ե։
Իսկ ինքը տաքացած է յեղել ու չի զգացել։
— Ե, լավ... թողեք դեռ առաջ պատմեմ, ինչ
իմացել եմ...

— Ի՞նչպես! Դու դեռ կարողացել ես վորեն
բան իմանա՞լ։ Այդ յե՞րբ դու հասցրիր։

— Յես ամեն ինչ իմացա. — հիմա լսեցեք...
Յեվ Վանիկը պատմեց բոլորը հերթով։

— Ապրես, ընկեր Աղատյան! Բանվորացյուն-
դացիական իշխանությունը չի մոռանա քո քաջու-
թյունը։ Իսկ հիմա անմիջապես զնա հիվանդանոց։

— Վոր ասում եք — կդնամ... Միայն չի կա-
րելի, ընկեր կամանդիր, Պարտիզանին ել հետո
տանեմ այնտեղ... Զե վոր նրան ել են վիրա-
վորել. պոչը պուլեմյուսով պոկել են։

Կամանդիրը ծիծաղեց, համբուրեց Վանիկին ու
ասաց.

— Իհարկե, Պարտիզանին ել կարելի յե հիվան-
դանոց, քանի վոր նա յել ե Խորհուրդների հա-
մար տուժել!



8 чпн. 25 1964

13587

X. 2.



Ф. КАМАНИН
Ванька вояка
и его собака

На армянском языке

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОЗНАНИЯ
Академии Наук
СССР

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.